



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԶԱՂԱԶԱՅԻՆԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄ

**ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի
4-րդ աշխատանքային խմբի
առցանց ժողով
Հոկտեմբերի 27, 2021**

Հանդիպմանը ներկա էին՝

- Դիանա Եղիազարյան, Երիտասարդական ակումբների դաշնություն ՀԿ, ԱԽ-4-ի համակարգող
- Դիանա Մարտիրոսյան, «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամ
- Մանե Գրիգորյան, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն ՀԿ
- Սեյրան Մարտիրոսյան, «Խորան Արդ» ինտելեկտուալ կենտրոն, Գյումրի
- Հարություն Ալեքսանյան, «Էլեգիա» մշակութային ՀԿ
- Գրիգոր Երիցյան, Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ
- Սոնա Մակասյան, ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա
- Հովսեփ Խուրշուդյան, «Ազատ քաղաքացի» քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոն ՔՆԱԿ

Օրակարգում՝

1. ԱԽ4-ում ներգրավված ՀԿ-ների կարիքների և առաջնահերթությունների սահմանում
2. ԱլԳ ՔՀՖ 2021թ. տարեկան ժողովի ժամանակ ԱԽ4-ի կողմից բարձրացվող հարցերի և խնդիրների քննարկում

1. Դիանա Եղիազարյանը հակիրճ ներկայացրեց, որ նախկին ամիսներին ՀԱՊ-ի ԱԽ-4-ը շատ ակտիվ չի եղել, աշխատանքային խմբով առանձին հանդիպումներ չի իրականացրել: Ցավոք, նաև նախորդ ԱլԳ ՔՀՖ տարեկան ժողովին հայ մասնակիցները շատ քիչ էին ու պասիվ: Դիանան առաջարկեց ներկայանալ ըստ ՀԿ-ների, զբաղվածության ոլորտների, որից հետո ներկաները սկսեցին ներկայացնել իրենց համար հրատապ և հետաքրքրող առաջնահերթություններն ու թեմաները:

Հարություն Ալեքսանյանին հետաքրքրում էր՝ ինչպես ավելի արդյունավետ կարող են համագործակցել ԵՄ-ի քաղհասարակության ներկայացուցիչների հետ ՔՀՖ-ի

շրջանակում: Նա նաև առաջարկեց, որ ոլորտային թեմաներով աշխատելը արդյունավետ կլինի ԱԽ-4-ի ներսում:

Սեյրան Մարտիրոսյանը նշեց, որ իրենց ՀԿ-ն պահիվ է եղել այս պլատֆորմում, սակայն որոշել են ակտիվանալ: Հետաքրքրված են կրթության ոլորտի, ոչ ֆորմալ կրթության, մշակութային, գյուղաբնակ երիտասարդների հարցերով: Առաջարկ՝ խմբի ներսում առավել նեղ ոլորտային քննարկումներ իրականացնել:

Հովսեփ Խուրշուդյանն ասաց, որ վերջին դեպքերից հետո կարևոր է կրթության թեման ակտիվ պահելը, հատկապես ֆորմալը, քանի որ միայն ոչ ֆորմալ կրթությամբ չենք կարողանալու ծածկել առաջացող բացը: Վերջին շրջանում կրթության պրոցեսների մեջ ՔՀԿ-ներին ներգրավելը ձևական բնույթ էր փաստորեն կրում: Օրինակ՝ դպրոցական խորհուրդներում Հովսեփի ներգրավվելու փորձերը անարդյունավետ են եղել: Հովսեփը կարևորեց կրթության ոլորտով զբաղվողների և հետաքրքրվողների առանձին հանդիպումը: Նա նաև նշեց, որ ԱլԳ ՔՀՖ-ում շատ կոնսուլտացիաներ արվում են վերջին շրջանում, բայց օրինակ ինովացիայի և հետազոտությունների կոնսուլտացիայում կարծես թե Հայաստանից մասնակից չկա:

Դիանա Եղիզարյանն իր հերթին արտահայտվեց ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության վերաբերյալ՝ նշելով, որ պետական երիտասարդական ռազմավարության փաստաթուղթը թեև մտավ հանրային քննարկման փուլ, հասավ E-draft, սակայն այն այդպես էլ իր հանգուցալուծումը չստացավ, և ռազմավարության վերջնական ընդունումը մնում է չավարտված, ինչը հիասթափեցնող է երիտասարդների, այդ պրոցեսին և աշխատանքային խմբում ընդգրկված մարդկանց համար:

Գրիգոր Երիցյանը հավելեց, որ երիտասարդական ռազմավարության փաստաթուղթը նախորդների համեմատ բավականին առաջադեմ էր ստացվել, ոլորտային ուղղություններ կային, հանրային լսումներ արվեցին, թափանցիկ պրոցեսներ կային: Ցավալի է, որ այդ գործընթացը անընդհատ վիժեցվում է ու փակուղի է գնում: Պետության հանձնառությունը երիտասարդության առջև մնում է բաց, կար գործողությունների հստակ ծրագիր: Այժմ դրամաշնորհների մրցույթ կա տարբեր ուղղություններով: Նա նաև հավելեց, որ Երևանի քաղաքապետարանում շուտով կբացվի առանձին երիտասարդության բաժին, երիտասարդական դրամաշնորհների բաց կանչ կա քաղաքապետարանի կողմից հայտարարված:

Սոնա Մակասյանը նշեց, որ թեև այսքան ՀԿ-ներ անդամակցում են ԱԽ-4-ին, սակայն կա անդամների կամ մոտիվացիայի պակաս կամ անտեղյակություն կամ այլ պատճառ: Անհրաժեշտ է պարզել անդամների մասնակցության մոտիվացիան կամ ըստ

անհրաժեշտության տրամադրել պլատֆորմի աշխատանքների մասին տեղեկատվություն:

Դիանա Մարտիրոսյանը կոչ արեց այն մարդկանց, ովքեր ԱԽ4-ում են և այս տարվա ընթացքում իրականացրել են ծրագրեր, ուղարկեն իրեն հակիրճ ինֆորմացիա առաջիկա 2 օրվա ընթացքում: Նա կուղարկի հիշեցում նաև մեյլով:

2. Դիանա Եղիզարայանը նշեց, որ ԱլԳ ընդհանուր ՔՀՖ 6 երկրների տարեկան ժողովների ժամանակ ադրբեջանցիները առիթը բաց չեն թողնում անընդհատ հայկական ազրեսիայի մասին հայտարարություններ հնչեցնելու, որին ի պատասխան մեր կողմը համարժեք չի արձագանքում:

Որոշվեց, որ առաջիկա ԱլԳ ՔՀՖ տարեկան ժողովի համար կպատրաստենք հայանպաստ, հայկական մշակութային ժառանգության ոչնչացման վերաբերյալ հայտարարություններ: Հովսեփը կուղարկի նախնական տարբերակ, որի վրա ավելացումներ կանեն մյուսները:

Դիանա Եղիզարայանը առաջարկեց, որ կանի հարցում՝ արդյոք ՀԿ-ները կուզեն տեղեկատվական հանդիպում ՔՀՖ-ի աշխատանքների և գործունեության մասին, ինչպես նաև թե ՀԿ-ները ինչ թեմաներով կուզեն նեղ ոլորտային քննարկումներ իրականացնել առաջիկայում այս աշխատանքային խմբի ներսում:

Արձանագրությունը կազմեց՝

Դիանա Եղիզարայանը